ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/205

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.12.2018թ. թիվ 27/26-3/23215-18 գրությամբ «Առնիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1.<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.12.2018թ. թիվ ԴՎԱ/ 4860 գրության պատճենի հիման վրա, 13.12.2018թ. թիվ 27/26-3/23215-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Առնիկա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Առնիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Առնիկա» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 26.12.2018թ. ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

««Առնիկա»» ՍՊԸ-ն (այսուհետնաև՝ Ընկերություն) 10.11.2018թ. հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով էլ. աճուրդին (այսուհետնաև՝ Աճուրդ) և որոշ չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով էլ. աճուրդի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 29.11.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետի համաձայն՝ <<Առնիկա>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում որակավորման չափանիշներին իրեն համապատասխանությունը հավաստող որևէ փաստաթուղթ չի ներկայացրել:

Նույն կետով գնահատող հանձնաժողովը որոշեց՝ առաջնորդվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով <<Առնիկա>> ՍՊԸ-ի հայտը մերժել:

Իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը, որը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական

չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ <<Առնիկա>> ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով էլ. աճուրդին և որոշ չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով էլ. աճուրդի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, սակայն՝ 29.11.2018թ. տեղիունեցածնիստիթիվ 3 արձանագրության 1.2 կետիհամաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ <<Առնիկա>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող որևէ փաստաթուղթ չի ներկայացրել և նույն կետով էլ գնահատող հանձնաժողովը որոշել է <<Առնիկա>> ՍՊԸ-ի հայտը մերժել:

Հայտնում ենք, որ<<Առնիկա>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում, այն է 22.11.2018թ.-ին ներկայացրել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով էլ. աճուրդի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, սակայն կապված Eauction համակարգի թերացումով փատաթղթերը գնահատող հանձնաժողովին չի հասել: Համակարգի միջոցով փաստաթղթերը ուղարկելու ժամանակ վստահեցնում ենք, որ Eauction համակարգի մեր անձնական էջում այրվել է կանաչ լույսը, իսկ կանաչ լույսը այրվում է միայն այն ժամանակ երբ փաստաթղթերը հաջողությամբ ուղարկվում է:

Վերոգրյալի հետ կապված ՀՀ ՖՆ-ի թեժ գծին ահազանգել ենք նշված խնդրի մասին և պահանջել ենք հանդիպում համապատասխան համակարգի սպասարկման բաժնի աշխատակիցների հետ, որտեղ բարձրաձայնել ենք <<Առնիկա>> ՍՊԸ-ի մոտ առաջացած խնդիրը և պահանջել ՀՀ ՖՆ-ից տրամադրել համապատասխան պարզաբանում, որպեսզի հնարավորություն ունենանք բողոքարկելու <<Առնիկա>> ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը:

Ի պատասխան մեր ընկերության կողմից 30.11.2018թ. կատարված հարցմանը՝ ՀՀ ՖՆ տվել է պարզաբանում, որում մասնավորապես նշվել է /կցվում է/.

Ահազանգի հիման վրա 30/11/2018թ. ժամը 15:24-ին խնդրի պարզաբանման պահանջ է ներկայացվել էլեկտրոնային աճուրդի համակարգի ծրագրային ապահովումն իրականացնող կազմակերպությանը, որը իրականացնելով տվյալների հենքի ուսումնասիրություն՝ փաստել է, որ «Առնիկա» ՍՊԸ օգտատերը (N48997) 22/11/2018թ. ժամը 11:28:36-ին մուտք է գործել վերոգրյալ ընթացակարգի «որակավորման փաստաթղթեր» ներբեռնելու էջ, այնուհետև 22/11/2018թ. ժամը 11:34:54-ին դուրս է եկել համակարգի «Մրցույթների ցանկ» բաժին, սակայն «որակավորման» փուլի տվյալներ չեն տրամադրվել համակարգ և դրանք առկա չեն հենքում:

ՀՀ ՖՆ-ի կողմից ներկայացված պարզաբանմամբ հստակ է, որ <<Առնիկա>> ՍՊԸ-ն 22.11.2018թ. ժամը 11:28:36-ին մուտք է գործել էլեկտրոնային աճուրդի համակարգի «որակավորման փաստաթղթեր» ներբեռնելու էջ և ժամը 11:34:54-ին դուրս է եկել համակարգի «Մրցույթների ցանկ» բաժին:

Այս փաստի հետ կապված հայտնում ենք, որ եթե որևէ ընկերություն մուտք է գործում Eauction էլեկտրոնային աճուրդի համակարգի «որակավորման փաստաթղթեր» բաժին, ապա կամ մուտք պետք է գործի ներբեռնելու էջ և ուղարկի համապատասխան փաստաթղթերը, կամ հրաժարվի ներբեռնելու էջի գործողությունից և նորդուրսգահամակարգի «Մրցույթների ցանկ» բաժին: <<Առնիկա>> ՍՊԸ-ի պարագայում՝ ընկերությունը մուտք է գործելէլեկտրոնայինաճուրդիհամակարգի «որակավորմանփաստաթղթեր» ներբեռնելու էջ և ժամը 11:34:54-ին դուրս է եկելհամակարգի «Մրցույթների ցանկ» բաժին, այսինքն առկա չէ Eauction էլեկտրոնային աճուրդի համակարգի «որակավորման փաստաթղթեր» բաժնի ներբռնելու էջից

հրաժարվելու գործողություն, որը միանշանակ կարձանագրվեր էլեկտրոնային աճուրդի համակարգի ծրագրային ապահովումն իրականացնող կազմակերպության կողմից:

Այնուամենայնիվ ՀՀ ՖՆ կողմից տրված պարզաբանումը չգոհացրեց <<Առնիկա>> ՍՊԸ-ին, քանի որ էլեկտրոնային աճուրդի համակարգի ծրագրային ապահովումն իրականացնող կազմակերպությունում տեղի ունեցած հանդիպման ընթացքում կազմակերպության պատասխանատուները ընդունեցին ծրագրի թերացման հետևանքով առաջացած խնդրի փաստը և պարտավորվեցին տալ հստակ պարզաբանում կապված վերոգրյալի հետ <<Առնիկա>> ՍՊԸ-ի կողմից լիազորված փաստաբանի կողմից կրկին հարցումներ կայացվեց ՀՀ ՖՆ, որով մասնավորապես խնդրել ենք հայտնել.

1. Արդյոք տեխնիկապես հնարավոր է, որ մասնակցի կողմից անհրաժեշտ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ուղարկվեն, սակայն դրանք տեխնիկական խնդիրների պատճառով առկա չլինեն հենքում և ինչով դա կարող է պայմանավորված լինել:

2. Արդյոք հնարավոր է պարզել, թե <<Առնիկա>> ՍՊԸ օգտատերը (N48997) 22/11/2018թ. ժամը 11:28:36-ից մինչև ժամը 11:34:54-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի «որակավորման փաստաթղթեր» ներբեռնելու էջում ինչ գործողություններ է կատարել:

ՀՀ ֆինանսների նախարարությունը իր 18.12.2018թ. թիվ 27/26-1/23598-18 գրությամբ, պատասխանելով կատարված հարցմանը, հայտնել է, որ հնարավոր չէ պարզել, թե <<Առնիկա>> ՍՊԸ օգտատերը (N48997) 22/11/2018թ. ժամը 11:28:36-ից մինչև ժամը 11:34:54-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի «որակավորման փաստաթղթեր» ներբեռնելու էջում ինչ գործողություններ է կատարել բրաուզերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ եթե նույնիսկ <<Առնիկա>> ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային աճուրդի համակարգի ծրագրի թերացման պատճառներով սահմանված եռօրյա ժամկետում որակավորման փաստաթղթերը չեն ներկայացվել Պատվիրատուին (չնայած Ընկերությունը բարեխղճորեն կատարել է իր փաստաթղթեր ներկայացնելու պարտականությունը), ապա գնահատող հանձնաժողովի կողմից պետք է տրվեր ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն՝ հնարավորություն ընձեռնել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, որի գնահատող հանձնաժողովի կողմից անտեսվել է (Կարգի 47-րդ կետով նախատեսված շտկման հնարավորություն տալու մասին նշել է նաև ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ իր 18.12.2018թ. թիվ 01.1/27-1/23597 գրությամբ):

ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ <<Առնիկա>> ՍՊԸ-ն 29.11.2018թ. Eauction համակարգի միջոցով Աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից ստացել է ծանուցում առ այն, որ Ընկերության հայտը մերժվել է՝ որակավորման փաստաթղթերը չներկայացնելու հիմքով: Նույն ծանուցմամբ գնահատող հանձնաժողովը առաջարկել է մեկ աշխատանքային օրում շտկել արձանագրված անհամապատասխանությունը: <<Առնիկա>> ՍՊԸ-ն հենց նույն օրը՝ 29.11.2018թ., կատարելով ծանուցման մեջ պահանջված գործողությունները, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել իր որակավորման չափանիշները հիմնավորող բոլոր փաստաթղթերը, որը այս անգամ գնահատող հանձնաժողովի կողմից ստացվել են»:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է <<Առնիկա>> ՍՊԸ-ի կողմից <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստը քննելիս՝ հաշվի առնել, որ իրականում <<Առնիկա>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջված փաստաթղթերը, սակայն համակարգային խնդրի պատճառով այդ փաստաթղթերը չեն հասել գնահատող հանձնաժողովին, բացի այդ, հենց ՀՀ ՖՆ է փաստում, որ հնարավոր չէ պարզել, թե <<Առնիկա>> ՍՊԸ օգտատերը (N48997) 22/11/2018թ. ժամը 11:28:36-ից մինչևժամը 11:34:54-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի «որակավորման փաստաթղթեր» ներբեռնելու էջում ինչ գործողություններ է կատարել բրաուզերում, այսինքն տեսականորեն չի բացառվում, որ Ընկերությունը կցել է համապատասխան փաստաթղթերը:

Բացի այդ, 29.11.2018թ. ստանալով համապատասխան ծանուցում շտկում կատարելու վերաբերյալ՝ Ընկերությունը բարեխղճորեն ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է նկատի ունենալ սույն դիրքորոշմամբ ներկայացված փաստերը և փաստարկները և <<Առնիկա>> ՍՊԸ-ին չվերագրել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Առնիկա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 17.12.2018թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 06.12.2018թ. թիվ ԴՎԱ/4860 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊՆ-ի կարիքների համար դեղորայքի գնման ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2 ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային հայտ էին ներկայացրել թվով 6 մասնակիցներ այդ թվում նաև՝ «Առնիկա» ՍՊԸ-ն:

Աճուրդի արդյունքում «Առնիկա» ՍՊԸ-ն 1, 5, 8, 13, 14-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: 21.11.2018թ. Eauction համակարգի միջոցով 1-ն տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկվեց ներկայացնելու հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն սահմանված ժամկետում Ընկերության կողմից պահանջվող փաստաթղթերը չներկայացվեցին:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել Ընկերության հայտը, միաժամանակ մասնակցի տվյալները

գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 17.12.2018թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՍՑ-ԱՄ-2018/205 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/205 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Առնիկա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության N 1 հավելվածի համաձայն՝ «Առնիկա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից մի շարք չափաբաժինների մասով:

3. «Առնիկա» ՍՊԸ-ին Eauction համակարգի միջոցով 21.11.2018թ. ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.2-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ «Առնիկա» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որևէ փաստաթուղթ չի ներկայացվել: Նույն կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.12.2018թ. թիվ 27/26-3/23215-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.12.2018թ. թիվ ԴՎԱ/4860 գրությունը և կից փաստաթղթերը, «Առնիկա» ՍՊԸ-ի կողմից 26.12.2018թ. ներկայացված գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի նպատակի և պահանջների կատարման ապահովման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված ***<u>փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը,</u>*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2»

ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Առնիկա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրության N 1 հավելվածի համաձայն՝ «Առնիկա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից մի շարք չափաբաժինների մասով:

«Առնիկա» ՍՊԸ-ին Eauction համակարգի միջոցով 21.11.2018թ. ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի հրավերի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետով սահմանվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝

1) համակարգի միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

ա. իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3-ի.

բ. գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, եթե կնքվելիք պայմանագիրն իրականացվելու է գործակալության միջոցով.

գ. համատեղ գործունեության պայմանագրի պատճենը, եթե մասնակիցները սույն ընթացակարգին մասնակցում են համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով). Ընդ որում համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության:

դ. զ. սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.2-րդ կետի 2-րդ պարբերության համաձայն՝ «Առնիկա» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որևէ փաստաթուղթ չի ներկայացվել: Նույն կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

Ընկերությունը ՍՑ-ԱՄ-2018/205 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 26.12.2018թ. ուղղված գրությամբ հայտնել է, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում՝ 22.11.2018թ. Eauction համակարգի միջոցով ուղարկվել են որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, սակայն համակարգի թերի աշխատանքի պատճառով համապատասխան փաստաթղթերը գնահատող հանձնաժողովին չեն հասել:

Միաժամանակ արձանագրում եմ, որ գործում առկա է Ընկերությանն ուղղված ՀՀ ֆինանսների նախարարության գրությունը, որի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ 30.11.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարության թեժ գծին Ընկերության կողմից ստացվել է ահազանգ այն մասին, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի որակավորման փաստաթղթերի ներկայացման փուլում 22.11.2018թ. Eauction.armeps.am կայք-էջից ուղարկվել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն պատվիրատուի գնահատող հանձնաժողովը դրանք գնահատել է անբավարար, որովհետև իրենց գնահատման էջերում դրանք առկա չեն եղել:

Ահազանգի հիման վրա 30.11.2018թ. ժամը 15:24-ին խնդրի պարզաբանման պահանջ է ներկայացվել էլեկտրոնային աճուրդի համակարգի ծրագրային ապահովումն իրականացնող կազմակերպությանը, որը իրականացնելով տվյալների հենքի ուսումնասիրություն՝ փաստել է, որ «Առնիկա» ՍՊԸ օգտատերը (N48997) 22.11.2018թ. ժամը 11:28:36-ին մուտք է գործել վերագրյալ ընթացակարգի որակավորման փաստաթղթեր ներբեռնելու էջ, այնուհետև 22.11.2018թ. ժամը 11:34:54-ին դուրս է եկել համակարգի «Մրցույթների ցանկ» բաժին, սակայն որակավորման փուլի տվյալներ չեն տրամադրվել համակարգ և դրանք առկա չեն հենքում:

Ընկերությունը վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանումը չգոհացրեց «Առնիկա» ՍՊԸ-ին, ուստի Ընկերությունը կրկին հարցում կատարեց ՀՀ ֆինանսների նախարարություն, որով մասնավորապես խնդրել է հայտնել հետևյալը.

1. Արդյոք տեխնիկապես հնարավոր է, որ մասնակցի կողմից անհրաժեշտ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ուղարկվեն, սակայն դրանք

տեխնիկական խնդիրների պատճառով առկա չլինեն հենքում և ինչով դա կարող է պայմանավորված լինել:

2. Արդյոք հնարավոր է պարզել, թե <<Առնիկա>> ՍՊԸ օգտատերը (N48997) 22/11/2018թ. ժամը 11:28:36-ից մինչև ժամը 11:34:54-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի «որակավորման փաստաթղթեր» ներբեռնելու էջում ինչ գործողություններ է կատարել:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 18.12.2018թ. թիվ 27/26-1/23598-18 գրությամբ, պատասխանելով կատարված հարցմանը, հայտնել է, որ հնարավոր չէ պարզել, թե «Առնիկա» ՍՊԸ օգտատերը (N48997) 22/11/2018թ. ժամը 11:28:36-ից մինչև ժամը 11:34:54-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/2» ծածկագրով ընթացակարգի «որակավորման փաստաթղթեր» ներբեռնելու էջում ինչ գործողություններ է կատարել բրաուզերում:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձին հայտնել է նաև, որ «Առնիկա» ՍՊԸ-ն 29.11.2018թ. Eauction համակարգի միջոցով Աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից ստացել է ծանուցում առ այն, որ Ընկերության հայտը մերժվել է՝ որակավորման փաստաթղթերը չներկայացնելու հիմքով: Նույն ծանուցմամբ գնահատող հանձնաժողովը առաջարկել է մեկ աշխատանքային օրում շտկել արձանագրված անհամապատասխանությունը, որի հիման վրա «Առնիկա» ՍՊԸ-ն հենց նույն օրը՝ 29.11.2018թ., կատարել է ծանուցման մեջ պահանջված գործողությունները, գնահատող հանձնաժողովին է ներկայացրել իր որակավորման չափանիշները հիմնավորող բոլոր փաստաթղթերը:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, իբրև թե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պետք է կիրառվեր ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը, ապա հայտնում եմ, որ էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը սահմանող ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշման 19-րդ կետի 5-րդ ենթակետը հստակ սահմանում է, որ նույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, և փաստաթղթեր

ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին: Հետևաբար մասնակցի կողմից որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ընդհանրապես չներկայացնելու դեպքում, վերջինիս հայտն ենթակա է մերժման:

Այսպիսով՝ վերը նշված փաստերով պայմանավորված, արձանագրում եմ, որ «Առնիկա» ՍՊԸ-ն կատարել է սահմանված գործողությունները և օգտագործել է ընձեռնված բոլոր հնարավոր միջոցները ներկայացնելու պահանջված փաստաթղթերը, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում Ընկերության վարքագիծը չի կարող գնահատվել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.12.2018թ. թիվ 27/26-3/23215-18 գրությամբ «Առնիկա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00048089) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**